Երկրորդ ընթերցում
Լրամշակված

Կ-480-13.02.2020,23.03.2020-ՏՏԳԲ-011

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության 1995 թվականի նոյեմբերի 7-ի ՀՕ-18 օրենքի (այսուհետ՝ Օրենք) հավելված 2-ի 2.5-րդ բաժնի 43-րդ, 2.10-րդ բաժնի 1-ին կետերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

| «Մարզի անվանումը | Համայնքի անվանումը | Բնակավայրի անվանումը |
|---|---|---|
| Լոռի | 43. Լերմոնտովո | Լերմոնտովո գյուղ |
| | | Անտառաշեն գյուղ |
| Տավուշ | 1. Իջեւան | Իջեւան քաղաք |
| | | Ազատամուտ գյուղ |
| | | Ակնաղբյուր գյուղ |
| | | Աճարկուտ գյուղ |
| | | Այգեհովիտ գյուղ |
| | | Աչաջուր գյուղ |
| | | Բերքաբեր գյուղ |
| | | Գանձաքար գյուղ |
| | | Գետահովիտ գյուղ |
| | | Դիտավան գյուղ |
| | | Ենոքավան գյուղ |

| | | |
|---|---|---|
| | | Լուսահովիտ գյուղ |
| | | Լուսաձոր գյուղ |
| | | Խաշթառակ գյուղ |
| | | Ծաղկավան (Իջևանի շրջ.) գյուղ |
| | | Կայան գյուղ |
| | | Կիրանց գյուղ |
| | | Սարիգյուղ գյուղ |
| | | Սեւքար գյուղ |
| | | Վազաշեն գյուղ»: |

*Հոդված 2.* Ուժը կորցրած ճանաչել օրենքի հավելված 2-ի 2.5-րդ բաժնի 26-րդ, 2.10-րդ բաժնի 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 13-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 26-րդ, 28-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 37-րդ, 39-րդ, 57-րդ, 58-րդ, 59-րդ կետերը:

*Հոդված 3.* Օրենքի հավելված 16.32-ը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հավելված 16.32
«Հայաստանի Հանրապետության
վարչատարածքային բաժանման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Լերմոնտովո համայնքը գտնվում է մարզի հարավ-արեւելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Գուգարք համայնքին, արեւելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Մարգահովիտ համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ ՀՀ Կոտայքի մարզին, արեւմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Շահումյան համայնքին:»:

*Հոդված 4.* Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 18.54-րդ հոդվածով.

**«Հոդված 18.54. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջեւան համայնքի վարչական սահմանների նկարագրությունը**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջեւան համայնքի վարչական սահմանների նկարագրությունը տրվում է սույն օրենքի բաղկացուցիչ մաս կազմող հավելված 18.54-ում:»:

*Հոդված 5.* Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 18.54-րդ հավելվածով.

**«Հավելված 18.54**
**«Հայաստանի Հանրապետության**
**վարչատարածքային բաժանման մասին»**
**Հայաստանի Հանրապետության օրենքի**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Իջեւան համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է պետական սահմանին, հարավ-արեւելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Բերդ համայնքին, հարավ-արեւմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Դիլիջան համայնքին, արեւմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ ՀՀ Լոռու մարզին, հյուսիս-արեւմուտքից «Ե»-«Ա» հատվածով՝ Նոյեմբերյան համայնքին:»:

*Հոդված 6.* Օրենքի 16.13-րդ, 18.2-րդ, 18.3-րդ, 18.5-րդ, 18.6-րդ, 18.8-րդ, 18.14-րդ, 18.15-րդ, 18.17-րդ, 18.19-րդ, 18.24-րդ, 18.25-րդ, 18.26-րդ, 18.28-րդ, 18.29-րդ, 18.45-րդ, 18.46-րդ, 18.47-րդ հոդվածները եւ հավելվածներն ուժը կորցրած ճանաչել:

*Հոդված 7.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*Երկրորդ ընթերցում*

*Լրամշակված*

*Կ-480-13.02.2020,23.03.2020-ՏՏԳԲ-011/1*

ՏԵՂԵԿԱՆՔ

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Հոդված 1.*** «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության 1995 թվականի նոյեմբերի 7-ի ՀՕ-18 օրենքի (այսուհետ՝ Օրենք) հավելված 2-ի 2.5-րդ բաժնի 43-րդ, 2.10-րդ բաժնի 1-ին կետերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

| «Մարզի անվանումը | Համայնքի անվանումը | Բնակավայրի անվանումը |
|---|---|---|
| Լոռի | 43. Լերմոնտովո | Լերմոնտովո գյուղ |
| | | Անտառաշեն գյուղ |
| Տավուշ | 1. Իջեւան | Իջեւան քաղաք |
| | | Ազատամուտ գյուղ |
| | | Ակնաղբյուր գյուղ |
| | | Աճարկուտ գյուղ |
| | | Այգեհովիտ գյուղ |
| | | Աչաջուր գյուղ |
| | | Բերքաբեր գյուղ |
| | | Գանձաքար գյուղ |
| | | Գետահովիտ գյուղ |

| | | |
|---|---|---|
| | | Դիտավան գյուղ |
| | | Ենոքավան գյուղ |
| | | Լուսահովիտ գյուղ |
| | | Լուսաձոր գյուղ |
| | | Խաշթառակ գյուղ |
| | | Ծաղկավան (Իջեւանի շրջ.) գյուղ |
| | | Կայան գյուղ |
| | | Կիրանց գյուղ |
| | | Սարիգյուղ գյուղ |
| | | Սեւքար գյուղ |
| | | Վազաշեն գյուղ»: |

***Հոդված 2.*** Ուժը կորցրած ճանաչել օրենքի հավելված 2-ի 2.5-րդ բաժնի 26-րդ, 2.10-րդ բաժնի 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 13-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 26-րդ, 28-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 37-րդ, 39-րդ, 57-րդ, 58-րդ, 59-րդ կետերը:

***Հոդված 3.*** Օրենքի հավելված 16.32-ը շարադրել հետեւյալ ~~բովանդակությամբ~~ խմբագրությամբ.

**«Հավելված 16.32**
**«Հայաստանի Հանրապետության**
**վարչատարածքային բաժանման մասին»**
**Հայաստանի Հանրապետության օրենքի**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Լերմոնտովո համայնքը գտնվում է մարզի հարավ-արեւելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Գուգարք համայնքին, արեւելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Մարգահովիտ համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ ՀՀ Կոտայքի մարզին, արեւմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Շահումյան համայնքին:»:

***Հոդված 4.*** Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 18.54-րդ հոդվածով.

**«Հոդված 18.54. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջեւան համայնքի վարչական սահմանների նկարագրությունը**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջեւան համայնքի վարչական սահմանների նկարագրությունը տրվում է սույն օրենքի բաղկացուցիչ մաս կազմող հավելված 18.54-ում:»:

*Հոդված 5.* Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 18.54-րդ հավելվածով.

**«Հավելված 18.54**
**«Հայաստանի Հանրապետության**
**վարչատարածքային բաժանման մասին»**
**Հայաստանի Հանրապետության օրենքի**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Իջեւան համայնքը գտնվում է մարզի կենտրոնական մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է պետական սահմանին, հարավ-արեւելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Բերդ համայնքին, հարավ-արեւմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Դիլիջան համայնքին, արեւմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ ՀՀ Լոռու մարզին, հյուսիս-արեւմուտքից «Ե»-«Ա» հատվածով՝ Նոյեմբերյան համայնքին:»:

*Հոդված 6.* Օրենքի 16.13-րդ, 18.2-րդ, 18.3-րդ, 18.5-րդ, 18.6-րդ, 18.8-րդ, 18.14-րդ, 18.15-րդ, 18.17-րդ, 18.19-րդ, 18.24-րդ, 18.25-րդ, 18.26-րդ, 18.28-րդ, 18.29-րդ, 18.45-րդ, 18.46-րդ, 18.47-րդ հոդվածները եւ հավելվածներն ուժը կորցրած ճանաչել:

*Հոդված 7.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ««ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (*Կ-480-13.02.2020,23.03.2020-ՏՏԳԲ-011/1*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 1. | ՀՀ կառավարություն | **«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված** | Նախագծի 3-րդ հոդվածում «հետևյալ բովանդակությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հետևյալ խմբագրությամբ» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջները: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 2. | ՀՀ կառավարություն | **«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի** | Նախագծի 1-ին հոդվածով օրենքի «Անցումային դրույթները» վերտառությամբ 102-րդ հոդվածում նախատեսվում է լրացնել նոր 3.1- | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | **Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված** | ին մաս, համաձայն որի՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո, Տավուշի մարզի Իջեւան համայնքներում Կառավարությունը նշանակում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների անցկացման կարգով:<br>Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հիշյալ դրույթի ինկորպորացիայի արդյունքում ստացվելու է, որ հիշյալ մարզերում ընտրությունները նշանակվելու են «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի ուժի մեջ մտնելուց, այսինքն՝ 2002 թվականի մայիսի 7- | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ից հետո վեց ամսվա ընթացքում, ինչը չի բխում հիշյալ կարգավորման նպատակից: Հետևաբար, առաջարկում ենք վերանայել ընտրությունների նշանակման ժամկետը կարգավորող իրավանորմը: | | |
| 3. | ՀՀ կառավարություն | **««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված** | Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում «հետևյալ խմբագրությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հետևյալ բովանդակությամբ» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջները: | Ընդունվել է: | Ընդունվել է: |